

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**

Էդգար Փիրումյան, Դշխուհի Սահակյան, Էվելինա Դուկայան, 2006

***Մունիցիպալ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների կառավարման  
խնդիրները.***

- Ջրի ցածր որակ, որն անմիջական վտանգ է ներկայացնում մարդկանց առողջության համար:
- Հոսքաջրերի անբավարար մաքրում, որը վտանգ է հանդիսանում էկոհամակարգերի կայունացման համար:
- Ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործում՝ պահանջարկի թերի կարգավորման, ենթակառուցվածքների վիճակի վատթարացման և կորուստների հետևանքով:
- Գյուղական վայրերում և փոքր քաղաքներում բնակչության մեծամասնությունը ապահովված չէ անվտանգ ջրով և ջրահեռացման համակարգերով:

***Ջրային ռեսուրսների կառավարման խնդիրները***

- Ջրի որակի ցածր ցուցանիշ, որը պայմանավորված է արդյունաբերական, գյուղատնտեսական և կենցաղային աղտոտմամբ, ջրհեղեղներ, հեղեղումներ և հողերի էրոզիա, ջրային ռեսուրսների բաշխման հետ կապված վեճեր տարբեր ջրօգտագործողների միջև, այդ թվում նաև անդրասահմանային մակարդակով, ջրախնայողության խթանների բացակայություն:
- Ջրային էկոհամակարգերի դեգրադացում՝ մակերևութային ջրերում և ափամերձ տարածքներում տնտեսական գործունեության և քիմիական աղտոտվածության հետևանքով:
- Ջրային պաշարի զգալի կրճատում, որը պայմանավորված է ջրերի անխնա օգտագործմամբ և շրջակա միջավայրի վատթարացմամբ:
- Ռեկրեացիոն տարածքների ձևավորման ընթացքում էկոհամակարգերի պահպանության անտեսում:

***Սևանա լճի խնդիր***

Իր նշանակությամբ եզակի Սևանա լճի էվոլյուցիոն և գերխոնավ հողերի պահպանությունը մասնավորապես այն հողերի, որոնք գտնվում են Արարատյան հարթավայրում և Սևանա լճի տարածքում: Սևանա լճի պահպանությունն ունի կարևոր նշանակություն կենսաբազմազանության, բնության արժեքների պահպանության, ջրային ռեսուրսների կայուն տնտեսական օգտագործման, ձկնաբուծության և լճի տարածքում զբոսաշրջիկության պոտենցիալ զարգացման առումներով: Սևանա լճի ջրի մակարդակը բարձրացնելով հնարավոր կլինի կանխել լճի էկոլոգիական խախտումները, որոնք առաջացել են լճի ջուրը մեծ ծավալներով բաց թողնելու հետևանքով:

***Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գործընթացում Հայաստանի  
ձեռքբերումները***

Հայաստանի կառավարությունը խորապես գիտակցում է, որ միայն երկրի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման միջոցով հնարավոր կլինի ապահովել երկրի ջրային պաշարների բնապահպանական և տնտեսական առումներով կենսունակ գործածությունը:

Նպատակ ունենալով կանոնակարգել ջրային ռեսուրսների կառավարման ոլորտը 1999-2000թթ. Համաշխարհային Բանկի աջակցությամբ մշակվել է «Ջրային ռեսուրսների

համապարփակ կառավարման ծրագիր» (ՁՈ-ՀԿԾ): Ծրագրի շրջանակներում գնահատվել են ՀՀ ջրային ռեսուրսները, մշակվել են ջրային քաղաքականության հիմունքները, առաջարկվել է կառավարման կառուցվածքային բարեփոխումների ծրագիր, ինչպես նաև ձևավորվել է ջրերի առաջարկի և պահանջարկի կառավարման ուրվագծերը: Առաջարկվել է նաև գետավազանային կառավարման գաղափարը ջրային ռեսուրսների տարեկան և հեռանկարային պլանավորման մեխանիզմի ներդրմամբ:

Հիմք ընդունելով ՁՈ-ՀԿ ծրագրի աշխատանքի արդյունքները՝ մշակվել է «Հայաստանի ջրային ռեսուրսների և ջրային տնտեսության կառավարման բարեփոխումների հայեցակարգ», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 9-ի թիվ 92 որոշմամբ:

Արդյունքում, սկսած 2001թ.-ից ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել գործնականորեն իրականացնելու հայեցակարգի դրույթները: 2001թ.-ին ստեղծվել է ջրատնտեսական համակարգերը (ջրամատակարարում ջրահեռացում, ոռոգում) շահագործող կազմակերպությունների գործունեությունը համակարգող և կառավարող Հայաստանի ջրային տնտեսության պետական կոմիտե, որի հիմնական նպատակն է վերահսկել պետական սեփականություն հանդիսացող ջրատնտեսական (գլխամասային կառուցվածքներ, տեղափոխող կոմունիկացիաներ բաշխիչ և հավաքող ցանցեր, մաքրման և այլ տիպի տեղնորգիական կառուցվածքներ) համակարգերը, աջակցել այդ համակարգերը շահագործող կազմակերպությունների ֆինանսական վիճակի բարելավմանը, ստեղծել նախադրյալներ մասնավոր հատվածի ներգրավման համար, ինչպես նաև մասնավոր «Կառավարման պայմանագրերի», մրցույթների միջոցով երաշխավորել ջրային համակարգերի համապատասխան կառավարում:

Ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների կանոնակարգման նպատակով 2002թ. փետրվարին ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվեց Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը: Գործակալության ստեղծմամբ փաստորեն իրականացվեց հայեցակարգում նշված այն հիմնանդրույթը, ըստ որի տարանջատվեցին ջրային ռեսուրսների պահպանման, կառավարման և օգտագործման գործառույթները երկու մարմինների միջև:

2002թ. հունիսի 4-ին ընդունվել է նոր Ջրային օրենսգիրքը:

Օրենսգիրքը պարունակում է համապարփակ ավազանային կառավարման գաղափարը, խթանում է առաջարկի, այլ ոչ պահանջարկի վրա հիմնված ջրերի բաշխման հետ կապված որոշումները, պարտադրում է տեղեկատվության վրա հիմնված ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, հնարավորություն է ընձեռում ջրային ռեսուրսների կառավարման և ծախսածածկման ընթացքում տնտեսական լծակների օգտագործման համար, ինչպես նաև հնարավորություն ընձեռի պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի մասնավոր կառավարման համար:

Օրենսգրքով պահանջվում է նրա իրականացման հետ կապված հիմնական դրույթների վերաբերյալ հանրության ծանուցման և մեկնաբանման կազմակերպում, ապահովելով տեղեկատվական մատչելիություն, որը լիովին համապատասխանում է Օրհուսի կոնվենցիային:

Օրենսգրքով ուժի մեջ է դրվում ինստիտուցիոնալ համակարգ, որով ներառվում են հետևյալ հիմնական իրականացնող մարմինները.

1. Ջրի ազգային խորհուրդը և դրա Վեճերը լուծող հանձնաժողովը,
2. Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազորված մարմինը,
3. Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման պետական լիազորված մարմինը և դրա հիդրոտեխնիկական կառուցվածքների տեխնիկական հանձնաժողովը,
4. Կարգավորող հանձնաժողովը՝ սակագների և ծառայությունների որակի կարգավորման պետական մարմինը,
5. Ջրօգտագործողների միությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները կանոնակարգող խորհուրդը,
6. Ջրավազանային կառավարման մարմինները,

7. Անդրսահմանային ջրերի ՀՀ հանձնախումբը:

2002թ. ընդունվել է «Ջրօգտագործողների ընկերությունների և Ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքը, համաձայն որի ստեղծվել են ջրօգտագործողների ընկերություններ և ջրօգտագործողների ընկերությունների միություններ, ինչը ջրօգտագործողներին թույլ կտա ստանձնել առավել մեծ պատասխանատվություն առաջնային ջրթողի ստորին հոսքի ոռոգման համակարգի կառավարման հարցում: Ընկերություններն ու միությունները անկախ, ինքնուրույնաբար կառավարվող և ինքնաֆինանսավորվող մարմիններ են, որոնք պետք է շահագործեն ոռոգման ջրանցքերը, գանձեն ոռոգման ծառայությունների համար սահմանված վարձավճարները՝ համակարգերի շահագործման և պահպանման համար:

Այժմ, ելնելով ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներից, ներդրման փուլում է գտնվում Ջրային պետական կադաստրի ինստիտուտը: Մշակվել են ծրագրեր՝

1. կադաստրի բաղադրիչ հանդիսացող ջրատնտեսական հաշվեկշռի կազմման կիրառական ծրագրերի, աշխարհագրական տեղեկատվական համակարգի (USՀ) (GPS) կիրառական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներին:

ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալության աջակցությամբ մշակվել են ջրի ազգային ծրագրի բաղադրիչ հանդիսացող “Ջրային ռեսուրսավճարների ռազմավարություն” փաստաթղթի նախագիծը, որն իր մեջ ներառում է ջրային ռեսուրսավճարի ռազմավարությանը նպաստող սկզբունքները, ջրային ռեսուրսավճարների ռազմավարությունը, փուլային մոտեցումը ջրային ռեսուրսավճարների ռազմավարության իրականացման գործում և հաջորդող քայլերը, որոնք կարգավորում են վերը նշված խնդիրները:

ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալության աջակցությամբ մշակվել և 2005 թվականի մայիսի 3-ին ընդունվել է “Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին” ՀՀ օրենքը:

Ելնելով ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներից, այժմ մշակման վերջին փուլում է գտնվում ՀՀ ջրի ազգային ծրագիրը, որը կպարունակի ազգային ջրային պաշարի մեծությունները, դրա պահպանմանը և ավելացմանն ուղղված միջոցառումները, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավմանն ու աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ջրերի նկատմամբ պահանջարկը, ջրերի ստանդարտները, ջրային ռեսուրսների, հիդրոտեխնիկական կառուցվածքների գործառնական նշանակության դասակարգումները և բնագավառի կառավարման ու պահպանության մի շարք մոտեցումներ և չափանիշներ:

Ելնելով Ջրի ազգային ծրագրից՝ կհաստատվեն ջրակոհամակարգերի՝ սանիտարական, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքները, կկազմվեն ջրավազանային կառավարման պլանները, որոնք կնպաստեն ջրային ռեսուրսների առավել արդյունավետ համապարփակ կառավարմանը և լիարժեք պահպանմանը:

***Ջրօգտագործման թույլտվությունները***

Չորն ունի տնտեսական, սոցիալական և բնապահպանական արժեք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները պետական սեփականություն են ու տնօրինվում, տիրապետվում և օգտագործվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Յուրաքանչյուր ջրօգտագործման թույլտվություն պետք է համապատասխանի ռազմավարական կառավարման պահանջներին, որոնք ձևավորվում են ջրի ազգային ծրագրով, ինչպես նաև ջրի որակի և քանակի ստանդարտներով: Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման մեխանիզմը պատկերված է ստորև:

Ջրային ռեսուրսների բաշխումը իրականացնելիս ՀՀ Ջրային օրենսգրքով ամրագրված են գերակայության հետևյալ չափանիշները.

1. առաջնահերթությունը տրվում է մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանը, առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունը.
2. երկրորդ գերակայությունը տրվում է բնական ջրահոսքերի հուններից ջրառ չպահանջող ավանդական ջրօգտագործողներին,
3. երրորդ գերակայությունը տրվում է հասարակական շահի համար առավելագույն օգուտներ ապահովող ջրօգտագործողներին.
4. չորրորդ գերակայությունը տրվում է ջրօգտագործողներին, որոնք առաջարկում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խրախուսման և որակի բարելավմանն ուղղված որոշակի միջոցառումներ:

***Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում համագործակցությունը և միջազգային ծրագրերը***

- Սևանա լճի գործողությունների ծրագիր (1995-1998),
- Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագիր (1995-2001),
- Շրջակա միջավայրի գործողությունների ազգային ծրագիր (1997-1998),
- Հայաստանի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագիր (1999-2001),
- Զուռի ավազանի գետերի համատեղ կառավարման ծրագիր (2001 - 2002),
- Ջրային ռեսուրսների կայուն կառավարման ծրագիր (2001 - 2003),
- Հարավային Կովկասում ջրային ռեսուրսների կառավարման ծրագիր (2001 - 2004),
- Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր, I մաս (2001 - 2007),
- Պատվարների անվտանգության ծրագիր (2000 -2005),
- Համայնքային զարգացման ծրագիր (1998- 2004),
- Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (2004 - 2008),
- Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր (2005 - 2009),
- Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացման ծրագիր (2004 - 2008),
- Զուռ-Արաքս գետավազանի անդրսահմանային դեգրադացիայի նվազեցման ծրագիր (2003 - 2005) և այլն:

Տարածաշրջանի մակարդակով համագործակցությունը իրականացվում է ինչպես տարածաշրջանային ծրագրերում մասնակցության, այնպես էլ առանձին կամ համալիր բնապահպանական հարցերի շուրջ երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերի կնքման միջոցով.

- 2000թ. Եվրամիության աջակցությամբ ստեղծվեց Կովկասի Տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնը /ՏԷԿ-Կովկաս/, որի աշխատանքների և ծրագրերի իրականացմանը հարևան երկրների հետ համատեղ ակտիվորեն մասնակցում է նաև Հայաստանը:
- 2002 թվականի հունվարին հիմնադրվել է Կովկասի և Կենտրոնական Ասիայի Գլոբալ Ջրային Համագործակցությունը, որի աշխատանքներին հարևան երկրների հետ համատեղ ակտիվորեն մասնակցում է նաև Հայաստանը:
- 2002 թվականին Յոհանեսբուրգյան գազաթաժողովից հիմնադրվեց Ջրային Նախաձեռնությունը:

***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ***

Հասարակական էկոլոգիական մոնիտորինգ ասելով՝ հաճախ հասկանում են շրջակա միջավայրի վիճակի կամ ազդեցության աղբյուրների դիտարկումներ, որոնք նպատակ ունեն էկոլոգիական տեղեկատվությունը մատչելի դարձնել հասարակության լայն խավերին:

Անչափ կարևոր է հասարակական էկոլոգիական մոնիտորինգի ճիշտ կազմակերպումը՝ ստեղծված իրավիճակի նախնական գնահատման և բնական ռեսուրսների վրա հնարավոր ազդեցության հիման վրա բացահայտել հիմնախնդիրները:

Մինչև որոշակի քայլեր ձեռնարկելը, նախաձեռնող խմբին անհրաժեշտ է հստակ կազմակերպել երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք պետք է լինեն իրատեսական, հասանելի, ստույգ, ստուգման ենթակա և ունենան ժամանակային սահմանափակումներ:

Ընդունված է, որ հասարակական մոնիտորինգը պետք է վերաբերվի բնակության տեղի հիմնախնդիրներին և սերտորեն կապված լինի հսկողության ուղղությամբ ձեռք առնված միջոցառումների հետ: Հասարակական մոնիտորինգը պետք է ներառի ինչպես որոշակի հիմնախնդրի վերաբերյալ ինֆորմացիայի ստացումը և մոնիտորինգի անցկացումը, այնպես էլ շահագրգիռ խմբերի շրջանում ինֆորմացիայի տարածումը (համայնքի նախաձեռնող խմբեր, ձեռնարկությունների վարչակազմ, պետական ծառայություններ):

Ճիշտ կազմած մոնիտորինգի ծրագիրը կօգնի բացահայտել առավել հրատապ հիմնախնդիրները, որոնք, հնարավոր է, դուրս են մնացել պետական ծառայությունների ուշադրությունից:

Հասարակական էկոլոգիական մոնիտորինգի տրամաբանական հաջորդ փուլը պետք է լինի իրավիճակի բարելավմանը կամ համապատասխան որոշումների ընդունմանը նպաստող գործունեությունը:

Ստորև բերվում են մի քանի խորհուրդներ, որոնք կարող են օգտակար լինել մակերևութային ջրերի հասարակական մոնիտորինգի կազմակերպման ժամանակ:

- Անհրաժեշտ է կատարել իրավիճակի վերլուծություն մինչև չափումների իրականացումը: Ուժերի ավելորդ կորուստ կարող է լինել ջրի այն բաղադրիչների ուսումնասիրությունը, որոնց պարունակությունը կախված չէ մարդու գործունեությունից, այլ բնական ֆոն է ջրի համար, օրինակ հանքավայրերով հոսող գետակներում պղնձի միացությունների բարձր կոնցենտրացիան:

- Հասարակական էկոլոգիական մոնիտորինգ անցկացնելիս նախընտրելի է առավել պարզ մեթոդների կիրառումը, որոնք մատչելի են նաև ոչ մասնագետներին և տալիս են ստույգ արդյունք:

- Առաջնայնությունների որոշման համար կարևոր է ազդեցության աղբյուրների քարտեզագրումը: Աղտոտվածության տեսակի և հնարավոր աղբյուրների բնույթի միջև որևէ կապի բացակայությունը կարելի է բացատրել ստորգետնյա ջրատար հորիզոնների տեղադրությամբ, առանձնահատկություններով կամ աղտոտվածության չբացահայտված աղբյուրների առկայությամբ:

- Ճշտելու համար, թե որքանով են ձեռնարկության հոսքաջրերը աղտոտում գետը, պետք է փորձանմուշներ վերցնել հոսքաջրերի թափման տեղից վերև և նրանից հետո:

- Մոնիտորինգի արդյունավետության կարևոր պայմաններից է նաև մեթոդների ճիշտ կիրառությունը և ստացված տվյալների գրագետ մեկնաբանությունը: Առանձին դեպքերում կարող է օգտակար լինել այլ փորձագետների ներգրավումը մոնիտորինգի պրոցեսում:

- Ավարտական փուլը մոնիտորինգի ծրագրի արդյունքների վրա հիմնված տեղեկատվության իրականացումն է և առաջարկների ներկայացումը շահագրգիռ կողմերին և կազմակերպություններին:

- Մոնիտորինգի ծրագիրն ամբողջությամբ պետք է լինի գիտականորեն հիմնավորված, հավաստի, բավականաչափ ճկուն՝ ստացված արդյունքների քննարկման համար, ինչպես նաև կայուն՝ ֆինանսավորման տեսակետից:

- Հասարակական կազմակերպությունների համար առավել արդիական ուղղություններից է փոքր գետերի վիճակի էկոլոգիական մոնիտորինգը, որոնց մեծ մասի ուսումնասիրությունները չեն մտնում պետական ծառայությունների կողմից իրականացվող մոնիտորինգային ծրագրերի մեջ: Ըստ որում, փոքր գետերի աղտոտվածության խնդիրը չափազանց սուր է դրված, քանի որ փոքր գետերի աղտոտվածության ազդեցությունը գետերի վրա շատ մեծ է, իսկ ազդեցության

աղբյուրները փոքր ջրահավաք ավազաններում ավելի հեշտ է որոշել և հետազոտել: Հարկ է նաև հաշվի առնել, որ էկոլոգիական վիճակի բարելավման համար տեղի բնակչությունն ունի ավելի շատ լծակներ:

- Ջրերի էկոլոգիական վիճակի ստուգումը պահանջում է որակավորված մասնագետներ, սարքավորումներ, քիմիական ռեակտիվների առկայություն, չափումների պլանավորման և իրականացման մանրամասն մոտեցում: Այդ իսկ պատճառով, որպես կանոն, իմաստ ունի այդ գործն իրականացնել, երբ սպառված են անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, եթե չկան հրապարակված տվյալներ, հնարավոր չէ դրանք ձեռք բերել պետական կազմակերպություններից, կամ այդ նյութերը մատչելի չեն:

- Բնապահպանական գործունեություն ծավալելիս պետք է ընդգծել, որ մաքուր ջուրը մեր ապագա սերունդների առողջության գրավականն է: Այդ իսկ պատճառով գործունեությունը, որն ուղղված է երեխաների առողջության պահպանմանն ու նրանց զարգացման պայմանների գնահատմանը, որպես կանոն, տեղի բնակչության ջերմ աջակցությանն է արժանանում:

- Սարքերի ու սարքավորումների կիրառումը տվյալների ձեռք բերման ժամանակ հաճախ է գրավում բնակիչների ուշադրությունը: Անհրաժեշտ է նրանց հետևողականորեն բացատրել կատարվող աշխատանքների կարևորությունը՝ այդ ձևով ձեռք բերելով նոր համախոհներ և օգնականներ բնապահպանական գործունեություն իրականացնելու համար:

Պետական ծառայությունների և գործարար մարդկանց հետ համագործակցելիս անհրաժեշտ է ամեն կերպ հաղթահարել այն կանխակալ կարծիքը, որի համաձայն հասարակական կազմակերպությունները աղմկահարույց և ոչ արհեստավարժ մարդկանց խմբեր են:

Անհրաժեշտ է հասկացնել, որ Դուք գիտակցում եք պետական ծառայողների և ձեռնարկատերերի շահագրգռվածությունը բնական միջավայրի պահպանության խնդրում: Հարկ է համախոհներ գտնել նշված խմբերում և հասնել նկատելի արդյունքների: Պետք չէ աշխատանքները սկսել սպառնալիքներից, անհրաժեշտ է առաջարկել համագործակցություն, որը տեղի համայնքների ուժերի սահմաններում է և հատուկ ծախսեր չի պահանջում:

Ստորև բերվում են օրինակներ, որոնք նպաստում են իրավիճակի բարելավմանը կամ համապատասխան որոշումների կայացմանը.

1. Դպրոցականների և երիտասարդների համար կարելի է կազմակերպել գետի էկոլոգիական վիճակի բարելավման երկարաժամկետ ակցիաներ: Ակցիայի էությունն այն է, որ յուրաքանչյուր խումբ իր խնամքի տակ է վերցնում գետի որոշակի հատված՝ հետևելով ափերի և հատակի մաքրությանը, ծառեր է տնկում ափի երկայնքով և այլն:

2. Երիտասարդների շրջանում կարելի է կազմակերպել մրցույթ “Ո՞վ է ավելի լավ ճանաչում գետը, այնտեղ ապրող բույսերն ու կենդանիները” թեմայով: Մրցույթի ընթացքում փորձել բացահայտել կենդանիների և բույսերի դերը էկոհամակարգում, պարզել նրանց վարած կենսակերպը և նրանց զգայունությունը աղտոտվածության այս կամ այն ձևի նկատմամբ:

3. Ցանկալի է ստեղծել “Գետի բարեկամներ” նախաձեռնող խմբեր, որոնք միասին ավելի մեծ հաջողությամբ կարող են վերականգնել ափի կանաչ գոտին և համոզել տեղի բնակիչներին աղբը չթափել գետ: Այս խմբերը գետի վիճակը բարելավելու նպատակով, քարոզարշավի և մոնիտորինգի արդյունքների տարածման ճանապարհով, կարող են օգտագործել ամենահզոր զենքը՝ հասարակական կարծիքը:

“Ինչպե՞ս կազմակերպել հասարակական էկոլոգիական մոնիտորինգ” գրքում (տպագրված՝ “Էկոլայն” կազմակերպության կողմից) առաջարկվում է խաղաղ գոյակցության հետաքրքիր մարտավարություն, ինչը ենթադրում է ձեռնարկության գործունեության բնույթի հետազոտում և հնարավորինս մասնակցություն միջոցառումներին, որոնք ուղղված են շրջակա միջավայրի վրա նրա ազդեցության կրճատմանը: Առավել հակիրճ առաջարկները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Ստացե՛ք “Առավելագույն ինֆորմացիա, առանց դիմելու ձեռնարկության վարչակազմին: Օգտվե՛ք գրականության մեջ եղած տեղեկություններից, որոնք նկարագրում են տեխնոլոգիական պրոցեսների օրինաչափությունները, նշելով արդյունաբերության տարբեր ճյուղերի կողմից շրջակա միջավայրը աղտոտելու բնորոշ աղբյուրները և մակարդակը:

2. Առավելագույնս համագործակցե՛ք պետական վերահսկող ծառայությունների և բնապահպանական կազմակերպությունների հետ:

3. Խուսափե՛ք անհարկի արտահայտություններից: Հիշե՛ք, որ ձեռնարկություններում աշխատում են պրոֆեսիոնալներ, որոնք ամենևին էլ Ձեր թշնամիները չեն: Ձեռնարկությունների աշխատակիցների շարքում կան լռող համախոհներ: Ի վերջո գլխավոր տեխնոլոգի երեխաները, եթե անգամ նույն թաղամասում չեն ապրում, ապա ապրում են նույն քաղաքում, լողում են նույն գետակում, որտեղ լցվում են հոսքաջրերը, շնչում են նույն օդը, որն աղտոտված է արտանետումներով:

4. Եթե դժվար է լավ հարաբերություններ հաստատել Ձեր հետազոտության օբյեկտների աշխատողների հետ, ապա հաշվի առե՛ք, որ Ձեր փորձագետները կարող են դառնալ այլ ձեռնարկությունների պրոֆեսիոնալ մասնագետներ, որոնք ծանոթ են նմանատիպ տեխնոլոգիական պրոցեսներին:

5. Ձեր պահանջները շարադրելիս եղե՛ք իրատեսական: Աշխատե՛ք համաձայնության գալ: Անիրականանալի պահանջները միայն զայրացնում են և չեն նպաստում հարցի լուծմանը: Պահանջել ձեռնարկությունը փակել միշտ էլ հնարավոր է, բայց ոչ ցանկալի: Չպետք է մոռանալ, որ այդ ձեռնարկությունը ոչ միայն աղտոտման աղբյուր է, այլև աշխատատեղ: Եվ երբ որևէ պահանջ է առաջադրվում, այն պետք է առաջարկի նաև հարցի լուծման այլ տարբերակ:

6. Հաշվի՛ առե՛ք նաև եղած փորձը: Այլ կազմակերպությունների փորձի քննարկումը, սխալների հաշվարկը և գործընկերների ձեռք բերումը հնարավորություն կտան խուսափել ուժերի և ժամանակի ավելորդ կորստից: